ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դանիայի Թագավորության (Կոպենհագեն) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

   Արուս Աթանեսյան.

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ինտեգրված սոցիալական ծառայությունների բաժնի փորձագետ.

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Դանիայի Թագավորություն (Կոպենհագեն), 2025 թվականի ապրիլի 28-ից մինչև մայիսի 1-ը.

4. **Հրավիրող կողմը.**

   Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն.

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն և ուսումնական այց «Հետընդունման,կամավոր վերադարձի և վերաինտեգրման ծրագրով» թեմաներով:

6. **Քննարկված թեմաները.**

   - Աշխատաժողովի առաջին օրը նվիրված է եղել Պրահյան գործընթացի գործողությունների ծրագրի շրջանակներում նախանշված գործողություններին մասնավորապես՝ կամավոր վերադարձի գործընթացների քննարկմանը, ազգային և տարածաշրջանային հեռանկարների ու փորձառությունների ներկայացմանը,

ինչպես նաև պետությունների կողմից իրականացվող քաղաքականությունների, դրանցում առկա խոչընդոտների ու կարիքների վեր հանմանը:

Ուսումնական այցի շրջանակներում խոսվել է Դանիայի հետընդունման և վերինտեգրման թեմաներով ծրագրերի մասին:

- Աշխատաժողովի երկրորդ օրը ներկայացվել և քննարկվել են ազգային և տեղական մակարդակներում վերաինտեգրման ոլորտում իրականացվող քաղաքականությունները, ծրագրերը: Խոսվել է նաև հետընդունման համաձայնագրերի և դրանց կիրարկման արձանագրությունների կատարման ընթացքի մասին:

- Աշխատաժողովի երրորդ օրը նվիրված է եղել մասնակից պետությունների միջև փորձի փոխանակմանը

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Վերոնշյալ թեմաների շրջանակներում հանդիպումներ են կազմակերպվել, մասնագիտական քննարկումներ և փորձի փոխանակում է իրականացվել ոլորտային ներքոնշյալ կառույցների ներկայացուցիչների հետ.

- ✓ Դանիայի Թագավորության արտաքին գործերի նախարարություն"
- ✓ Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն"
- ✓ Դանիայի վերադարձի գործակալություն
- ✓ Կոպենհագենի օդանավակայանում այցելություն է կատարվել Դանիայի վերադարձի գործակալության ենթակառուցվածքներ՝ ծանթացում է եղել գործակալության գործունեությանը, ընդունման և վերադարձի գործընթացների կազմակերպման մեխանիզմներին:

Ներկայացրել եմ վերադարձի և վերաինտեգրման ոլորտում հայաստանյան լավագույն փորձը: Աշխատաժողովի ժամանակ խոսել եմ վերադարձի և վերաինտեգրման գործառույթները ՀՀ ներքին գործերի նախարարությունից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության փոխանցման, մշակվող ինտեգրման և վերաինտեգրման

խնդիրների կարգավորման ռազմավարության 2025-2029թթ, պետական և ոչ պետական աջակցության ծրագրերի, ինչպես նաև հատկացվող աջակցության տեսակների մասին: Մասնակցել են նաև ընթացքում տեղի ունեցած քննարկումներին, ներկայացնելով՝ վերադարձի և վերաինտեգրման ոլորտում լավագույն փորձը և առկա մարտահրավերները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացքում ֆորմալ որոշումներ չեն կայացվել, կողմերը փոխանակվել են կոնտակտային տվյալներով՝ հետագայում, ըստ անհրաժեշտության, կապ հաստատելու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է շարունակել մասնագիտական համագործակցությունը՝ վերադարձի և վերաինտեգրման, ինչպես նաև ինտեգրման ոլորտներում՝ ըստ անհրաժեշտության:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Արուս Աթանեսյան **06/05/2025**